

Մինչև 1958 թվականը Բյուրեղավանի բնակիչների բուժսպասարկումը կատարվել է № 1 առողջարանում: 1958 թվականին հիմնադրվել է ավանի հիվանդանոցը: 1970 թվականին հիվանդանոցը տեղափոխվել է ներկայիս շենքի առաջին հարկ,իսկ շենքն ամբողջությամբ հիվանդանոցին է տրամադրվել 1987 թվականին: 1996 թվականից մինչև 2008-ը քաղաքային պոլիկլինիկան կոչվում էր «Առողջության կենտրոն» ՓԲԸ, 2008 թվականին այն անվանափոխվեց «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի: 2007 թվականին «Առողջության կենտրոն» ՓԲԸ-ին «Գագիկ Ծառուկյան» բարեգործական ընկերության կողմից նվիրաբերվել է «ԳԱԶ-326901-0000-010-07» մակնիշի 2007 թվականի արտադրության հատուկ նշանակության «շտապօգնության» ավտոմեքենա, որը բացի Բյուրեղավան,Արզնի,Նուռնուս համայնքներից ամառային սեզոնին սպասարկում է նաև առողջարաններում և ամառանոցներում հանգստացողներին: 2010 թվականի փետրվարից «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ում կատարվեցին վերանորոգման աշխատանքներ՝ ամբողջովին փոխվեցին շենքի պատուհանները՝ տեղադրելով եվրոպական արտադրության պատուհաններ, շենքում տեղադրվեց ջեռուցման համակարգ: «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ում աշխատում են բժիշկներ հետևյալ մասնագիտությամբ՝ քիթ-կոկորդ, էնդոկրինոլոգ, սրտաբան, վիրաբույժ, գինեկոլոգ, մաշկավեներոլոգ, նյարդաբան, ատամնաբույժ, 2 մանկաբույժ, 4 թերապևտ: Կա սոնոգրաֆիկ ճառագայթային ախտորոշման ծառայություն, կլինիկական և բիոքիմիական լաբարատորիա և ֆիզիոթերապևտիկ կաբինետ: «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի պաշտոնական կայքն է՝ <http://byureghavantownpoliclinic.am/>

Գլխավոր բժիշկներն ըստ ժամանակագրության՝

1973-2002 թթ՝ Անդրանիկ Պետրոսյան

2002-2008թթ՝ Վարդան Ավետիսյան

2008-2009թթ՝ Վազգեն Շուշանյան

2009թ-ի հուլիսից՝ Արմեն Մոսիկյան: